DISCLAIMER: As Member States provide national legislations, hyperlinks and explanatory notes (if any), UNESCO does not guarantee their accuracy, nor their up-dating on this web site, and is not liable for any incorrect information. COPYRIGHT: All rights reserved.This information may be used only for research, educational, legal and non-commercial purposes, with acknowledgement of UNESCO Cultural Heritage Laws Database as the source (© UNESCO).

"ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ"
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

"15" մարտի 2004 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

26 փետրվարի 2004 թվականի N 245-Ն

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով "Մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ եւ 17-րդ հոդվածները եւ մշակութային արժեքների ու մշակութային նշանակության առարկաների արտահանումը կարգավորելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

ա) մինչեւ 50 տարվա վաղեմություն ունեցող կերպարվեստի եւ դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծագործությունների ցանկը, որոնց արտահանումը Հայաստանի Հանրապետության տարածքից իրականացվում է առանց մշակութային արժեքների արտահանման իրավունքի վկայագրի՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) մինչեւ 75 տարվա վաղեմություն ունեցող մշակութային նշանակության առարկաների, մշակութային նշանակության սերիական եւ զանգվածային արտադրության առարկաների ու հուշանվերների ցանկը, որոնց արտահանումը Հայաստանի Հանրապետության տարածքից իրականացվում է առանց մշակութային արժեքների արտահանման իրավունքի վկայագրի՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեի նախագահին՝

ա) թույլատրել սույն որոշման 1-ին կետի "ա" ենթակետով հաստատված՝ մինչեւ 50 տարվա վաղեմություն ունեցող կերպարվեստի եւ դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծագործությունների՝ Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանումը, որոնց վրա առկա են հեղինակի ստորագրությունը, ստեղծման տարեթիվը՝ բացառությամբ անթվակիր, անստորագիր եւ Հայաստանի Հանրապետության մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության կողմից հաստատված ցանկում ընդգրկված հեղինակների.

բ) թույլատրել սույն որոշման առաջին կետի "բ" ենթակետով հաստատված՝ մինչեւ 75 տարվա վաղեմություն ունեցող մշակութային նշանակության առարկաների, մշակութային նշանակության սերիական եւ զանգվածային արտադրության առարկաների ու հուշանվերների՝ Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանումն առանց մշակութային արժեքների արտահանման իրավունքի վկայագրի:

3. Հայաստանի Հանրապետության մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարին՝

ա) մեկամսյա ժամկետում հաստատել եւ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտե ներկայացնել սույն որոշման 2-րդ կետի "ա" ենթակետում նշված հեղինակների ցանկը: Ցանկի փոփոխության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեին 15-օրյա ժամկետում ներկայացվում է նոր ցանկ.

բ) ապահովել սույն որոշման 2-րդ կետի "ա" ենթակետում նշված անթվակիր եւ անստորագիր ստեղծագործությունների՝ Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանումը՝ առանց մշակութային արժեքների արտահանման իրավունքի վկայագրի՝ դրանց լուսանկարների շրջերեսին վավերացնելով իսկությունը:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 5-ի "Մշակութային արժեքների եւ առարկաների արտահանումը կանոնակարգելու մասին" N 137 որոշումը:

DISCLAIMER: As Member States provide national legislations, hyperlinks and explanatory notes (if any), UNESCO does not guarantee their accuracy, nor their up-dating on this web site, and is not liable for any incorrect information. COPYRIGHT: All rights reserved.This information may be used only for research, educational, legal and non-commercial purposes, with acknowledgement of UNESCO Cultural Heritage Laws Database as the source (© UNESCO).

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ
2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-ԻՆ

Հավելված N 1
ՀՀ կառավարության
2004 թվականի փետրվարի 26-ի
N 245-Ն որոշման

ՑԱՆԿ
ՄԻՆՉԵՎ 50 ՏԱՐՎԱ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԵՎ ԴԵԿՈՐԱՏԻՎ-ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ԱՌԱՆՑ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐԻ

1. Գեղանկարչական ստեղծագործություններ՝

հաստոցային գեղանկարչություն
տարածական գեղանկարչություն
դեկորատիվ գեղանկարչություն
մանրանկարչություն
սրբանկարչություն
խճանկարչություն
2. Գրաֆիկական ստեղծագործություններ եւ դրանց տպագրական վերարտադրություններ
3. Քանդակագործական ստեղծագործություններ՝
հաստոցային քանդակագործություն
մանր պլաստիկա
4. Դիզայներական ձեւավորումների նախագծեր
5. Ինստալյացիաներ
6. Գեղարվեստական հորինվածքներ (կոմպոզիցիաներ) եւ սարվածքներ (մոնտաժներ)
7. Կոլաժներ
8. Օբյեկտ-հորինվածքներ
9. Գեղարվեստական լուսանկարչություն
10. Բեմանկարչական ստեղծագործություններ
11. Դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծագործություններ՝ անկախ նյութից (կավե, ապակյա, բյուրեղապակյա, բրոնզե, պղնձե, պողպատե, երկաթյա եւ մետաղյա, այդ թվում՝ արծնապատ, թանկարժեք եւ կիսաթանկարժեք մետաղներից ու քարերից, քարից, փայտից, ոսկրից, խեցուց, կաշվից եւ գործվածքի տարբեր տեսակներից պատրաստված գեղարվեստական հորինվածքներ)՝
սպասք
պահոց
գործվածք՝ անխավ, խավոտ, ասեղնագործ եւ այլ տեսակների
դեկորատիվ կոմպոզիցիաներ
դեկորատիվ դրվագումներ

Հավելված N 2
ՀՀ կառավարության
2004 թվականի փետրվարի 26-ի
N 245-Ն որոշման

ՑԱՆԿ
ՄԻՆՉԵՎ 75 ՏԱՐՎԱ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՍԵՐԻԱԿԱՆ ՈՒ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԵՎ ՀՈՒՇԱՆՎԵՐՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ԱՌԱՆՑ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԱՐԺԵՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐԻ

DISCLAIMER: As Member States provide national legislations, hyperlinks and explanatory notes (if any), UNESCO does not guarantee their accuracy, nor their up-dating on this web site, and is not liable for any incorrect information. COPYRIGHT: All rights reserved.This information may be used only for research, educational, legal and non-commercial purposes, with acknowledgement of UNESCO Cultural Heritage Laws Database as the source (© UNESCO).

1. Պետական պարգեւներ եւ շքանշաններ (եթե արտահանողը պարգեւատրված անձն է եւ ունի համապատասխան գրքույկ)

2. Ծիսապաշտամունքային բնույթ ունեցող առարկաներ անկախ նյութից՝

խաչքարեր, խաչեր, մոմակալներ, հմայիլներ՝ ձվեր, դաղդաններ, ուլունքներ եւ այլ առարկաներ

կրոնական գրականություն

3. Կենցաղային առարկաներ՝

կահույք (առանձին առարկաներ կամ լրակազմ)

սերիական արտադրության ձեռագործ եւ մեքենայական արտադրության գորգեր, կարպետներ եւ գործվածք,

հագուստ եւ հագուստի առանձին տարրեր

սպասք

արդուզարդի առարկաներ

խաղի եւ ժամանցի առարկաներ, խաղալիքներ

արհեստագործական առարկաներ

4. Հուշանվերներ եւ հուշանվերային զենք՝ անկախ նյութից

5. Տեխնիկական առարկաներ՝

ավտոմեքենաներ, մոտոցիկլետներ, հեծանիվներ

բժշկական գործիքներ եւ սարքեր

կարի մեքենաներ եւ գրամեքենաներ

ժամացույցներ՝ անկախ ձեւից եւ չափսից

չափիչ գործիքներ եւ սարքեր

ռադիոսարքավորումներ եւ մագնիտոֆոններ, նվագարկիչներ եւ երաժշտական կենտրոններ

լուսանկարչական ապարատներ, կինոխցիկներ, տեսախցիկներ եւ տեսամագնիտոֆոններ

տարբեր տեսակի հեռախոսային սարքավորումներ

դիտակներ

համակարգիչներ եւ դրանց բաղկացուցիչ մասերը

էլեկտրական եւ մեխանիկական կենցաղային սարքեր

6. Մանրակերտեր (մակետներ եւ մոդելներ) անկախ նյութից՝

ինքնաթիռների, մեքենաների, նավերի եւ այլ առարկաների պատմաճարտարապետական հուշարձանների

7. Երաժշտական գործիքներ՝ գործարանային եւ ձեռագործ, որոնք ունեն համարանիշ կամ պիտակ, գործարանային վկայական՝

ստեղնային, փողային, հարվածային, էլեկտրական նվագարաններ

բայան, հարմոն, ակորդեոն

լարային նվագարաններ եւ աղեղներ

8. Հրատարակություններ՝

տարբեր հեղինակների ստեղծագործությունների առանձին ժողովածուներ կամ երկերի ժողովածուներ

պարբերականներ, նոտային, քարտեզագրական, գիտահանրամատչելի գրականություն, գրքույկներ (բրոշյուրներ), գովազդային եւ այլն

մանկական գրականություն, դասագրքեր եւ ձեռնարկներ, տեղեկատվական գրականություն (բառարաններ, զրուցարաններ, տեղեկատուներ, հանրագիտարաններ, ցուցակներ (կատալոգներ) եւ այլն

փաստավավերագրական եւ տպագիր նյութերի վերարտադրություն՝ ցանկացած նյութական կրիչի վրա

ֆիզիկական եւ մտավոր արատներ ունեցող անձանց համար ստեղծված տպագիր նյութեր եւ առարկաներ

9. Տպագիր գրաֆիկական եւ լուսանկարչական հրատարակություններ՝

վերատպություններ, վիմատպություններ, փորագրանկարներ, բացիկներ, պլակատներ

լուսանկարչական ալբոմներ եւ լուսանկարչական արտադրանք

10. Մանկական ստեղծագործություններ՝ անկախ նյութից

11. Կրծքանշաններ, հուշանշաններ, հոբելյանական դրամներ եւ հուշադրամներ

12. Տեսալսողական արտադրանք

13. Ֆիլատելիստական նյութեր